

ՀԱՅ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԴԸ ԿՈՄԻՏԱՍԻ
ՍՏԵՂԾԱԴՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՌՈՐԵՐՏ ԱԹԱՅԱՆ

Կոմիտասի ստեղծագործության հիմնական ժանրը գյուղական երգերի մշակումն էր և այս ժանրի հետ են կապված նրա կոմպոզիտորական ամենավառ նվաճումները:

Գյուղական երգերի համեմատությամբ քաղաքի ժողովրդականացած հայկական երգերը Կոմիտասի ստեղծագործության մեջ շատ փոքր տեղ են զբաղեցրել: «Աշխատությանս վերնագիրը գիտմամբ «Հայ գեղջուկ երաժշտությունը» գրի, որովհետև քաղաքացիք ոչ մի ժողովրդական երգ չեն ստեղծել»,— գրում էր նա:

Ակնարկվող ուսումնասիրությունը (1906 թ.) իրոք ընդգրկում է բացառապես հայ գյուղական երգը: Կոմիտասն այդ էր համարում հայկական բուն ժողովրդական երաժշտության հիմնական, ավելի ճիշտ՝ միակ ժառանգությունը և, հայկական երաժշտությունն իր առավել ցայտուն ազգային գծերով ցուցադրելիս կամ հայ պրոֆեսիոնալ երաժշտության ազգային հիմքերը կերտելիս, այս հարցում, պատմական տվյալ պայմաններում նա իրավացի էր:

Սակայն, գյուղական երգերի կողքին գոյություն ունեին քաղաքներում լայնորեն տարածված ու ժողովրդականություն վայելող բազմաթիվ երգեր, որոնց մեղեդիական ոճը թեև բավական հեռու էր գյուղական երաժշտության անարատությունից, բայց այդ երգերը խորապես մտել էին ժողովրդի կենցաղի մեջ, հանդիսանում էին այդ կենցաղը կազմավորող հիմնական տարրերից մեկը: Մի քանի տասնյակ տարիների կենցաղավարման ընթացքում ղրանցից շատերը հղկվել էին, կորցրել իրենց երրեմնի անհատական ստեղծագործության գծերը, ձեռք բերել ոճական ինչ-որ ընդհանրացվածություն, ինչ-որ ավանգականություն: Դա նոր ժամանակների հայ քաղաքային ժողովրդական երաժշտությունն էր, այդ երաժշտության ամենաէական մասը:

Այդ երգերը ժամանակի ընթացքում նաև կրել էին բուն գյուղական երգի որոշակի ազդեցությունը, գրանք, մասնավորապես որոշ տեսակները, տարածվել էին քաղաքներից հեռու, նույնիսկ գյուղական վայրերը: Կարո՞ղ էր Կոմիտասը զերծ մնալ այդ երգերից, քաղաքի երաժշտական կենցաղից, պարզապես քաղաքի կյանքից: Կարո՞ղ էին արգյոք գյուղական երգերը, որ Կոմիտասը ծրագրել էր տասնյակներով, միաձայն վիճակում հրատարակել «առձեռն գործածության համար», իրենց երաժշտական և բանաստեղծական էությամբ միանգամից և լիովին փոխարինել քաղաքային երգերին: Եթե չխորանանք էլ այս հարցում, չենք կարող չասել, որ գյուղական երգերում արտահայտվող սիրային խոր ու բազմազան քնարականությունից, վիպականությունից, աշխատանքային մոտիվներից, ծիսական ավանգություններից և ընդհանուր սոցիալական հարցերից բացի (կամ՝ ղրանց կողքին) հայ հասարակությանը հետաքրքրում էին նաև այլ հարցեր, և սրանց թվում առաջինը՝ ազգային ազատա-

գրության հարցը: Քաղաքում ժողովրդականացած երգերի մի զգալի մասը հենց այդ տեսակի, դեռևս գարի վաթսուներկան թվականներից սկիզբ առած հայրենասիրական երգերն էին: Որպես իր հարադատ ժողովրդի կյանքին բազմազան կապերով կապված, նրա շահերով տոգորված առաջադեմ քաղաքացի, Կոմիտասն, ի՞նչ խոսք, չէր կարող զերծ մնալ ժամանակի ազգային-աղատագրական շարժումից, իսկ այդ շարժման ցայտուն դրսևորումներից մեկը այդ հայրենասիրական երգերն էին:

Գործնականում Կոմիտասը հայ քաղաքային ժողովրդականացած երգերը ձայնագրել, մշակել, ներդաշնակել, կատարել և նույնիսկ տպագրել է, ավելին՝ նա իր ուղի գործերը գրել է քաղաքային ժողովրդական երաժշտության ոճով, նաև՝ քաղաքային երգերից առանձին դարձվածքներ օգտագործելով:

Քաղաքային ժողովրդական երգերով Կոմիտասը սկսել է հետաքրքրվել ուսանողական տարիներից: Պետք չէ, սակայն, կարծել, թե Կարա-Մուրզայի և Եկմալյանի նման նա էլ սկզբից ընկալել է միայն քաղաքի երգը, հետո նկատել գյուղականը, բնիկ ժողովրդականը: Այլ կերպ ասած՝ պետք չէ կարծել, թե Կոմիտասը քաղաքային երգով զբաղվել է գյուղական երգը դեռևս դիտակցած չլինելու պատճառով: Ճիշտ հակառակը: Կոմիտասը իր դիտակցական կյանքի առաջին տարիներից ընկել էր գյուղական երգի ոլորտի մեջ, նրա ձայնադրած և նախնական վիճակում ներդաշնակած դեղջկական շատ լավագույն երգեր հենց այդ շրջանի արդյունք են:

Պետք չէ նաև կարծել, թե քաղաքային երգերով զբաղվել է սկզբնական շրջանում, իսկ հետո «լրջացել» և զբաղվել է միայն գյուղական երաժշտությամբ: Լրջորեն մոտենալով մեկին և մյուսին, ճշգրիտ ընկալելով մեկի առօրյա և մյուսի՝ նաև հեռանկարային արժեքը, Կոմիտասն, այնուամենայնիվ, քաղաքային երգով զբաղվել է գյուղականին ղուգահեռ, ուսանողական շրջանից սկսած մինչև դործունեության վերջին տարիները: Ապացուցելու համար կարող ենք բերել տարբեր շրջանների վերաբերող մի քանի փաստ:

1898 թ. նոյեմբերին ուսանող Կոմիտասը Բեռլինից գրում էր Կ. Կոստանյանին. «Եկող տարի Ճեմարանի 25-ամյակն է: Հարկավոր է մի քանի բան պատրաստ ունենալ... Ղլխավոր ուժս դործ կղենեմ մի խումբ կազմելու... ես արդեն ունեմ «Տեր, կեցո»-ն և «Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիք»-ը թե՛ խմբի, թե՛ նվագի համար, և կպատրաստեմ ժողովրդականներից էլ ընտիրները...»: Բերված անունները քաղաքի ժողովրդականացած երգեր են:

Կոմիտասի՝ Բեռլինի շրջանին վերաբերող մի նոտատետրում, գերմաներեն նշումներով գրված «Սոնա յար», «Անձրեն եկավ», «Հոյ, նազան» և այլ գյուղական երգերի կողքին գտնում ենք «Հայ ապրինք, եղբայրք» երգի՝ այն ժամանակվա համար ստեղծագործական իմաստով բավական լուրջ և ծանրակշիռ մշակումը: 1897—98 թվականներին վերաբերող մի այլ տետրում «Տեր, կեցո»-ից բացի կան նաև «Ո՛հ, ինչ անուշ» երգի դաշնակման փորձեր (Կոմիտասի այս տետրը գտնվում է Եգիպտոսում):

Հայ քաղաքային երգերի մեղեդիական դարձվածքները կամ նրանց ոճը վաղ շրջանում Կոմիտասն օգտագործել է «Կո դետս Բաբելացվոց» սաղմոսում, մի քանի տարի հետո՝ «Ո՛ւր ես գալի, ա՛յ գարուն» խմբերգում: 1906 թվականի Փարիզի նշանավոր համերգում Կոմիտասը քաղաքային երգերի մշակումներ չի հնչեցրել, բնական է: Բայց, օրինակ, 1908 թվականին տպագրելու է տվել «Հիմի էլ լոենք» և «Արաքսի արտասուքը»: Այնուհետև, թե՛ էջմիածնի

և թե՛ Պոլսի շրջանի հայտագրերում գտնում ենք՝ «Ես լսեցի մի անուշ ձայն», «Մեղ նոր արև ծագե», «Ո՛հ, ինչ քաղցր բան», «Մինչդեռ հուսով», «Մայր Արաքսի ափերով» և այլ երգեր: 1913 թվականին Պոլսում տպագրել և կատարել է «Ո՛վ, մեծասքանչ դու լեզու» երգի մշակումը: Ավելացնենք, որ քաղաքային երգի տարրերը առատորեն ներկա են հանրահայտ «Սիփանա քաջեր» խմբերգում, որը Կոմիտասի ուշագրությունը դբաղեցրել է դեռևս վաղ ճեմարանական տարիներին: սկսած և հետագայում դարձել է նրա բոլոր համերգներն եղրափակող երգը:

Մինչև այժմ մեղ հաջողվել է Կոմիտասի ձեռագրերում գտնել և սևագրություններին վերծանել հայ քաղաքային ժողովրդական (կամ՝ ժողովրդականացած) հետևյալ երգերի մշակումները. «Տե՛ր, կեցո դու զհայս», «Մի գեղեցիկ պարզ գիշեր էր», «Ո՛հ, ինչ անուշ», «Ո՛հ, ինչ քաղցր բան», «Արաքսի արտասուքը», «Հայ ապրենք, եղբայրք», «Երաղ», «Թող բլբուլ շերգե», «Առավոտ լուսաբեր», «Հիմի է՛լ լռենք», «Մինչդեռ հուսով», «Ահա ծագեց կարմիր արև», «Վարդան», «Մեղ նոր արև ծագե», «Ո՛վ, մեծասքանչ դու լեզու», «Կիրիկիա», «Հայրիկ, Հայրիկ», «Արիք հայկազունք» (վերջին երեքը՝ անավարտ), բոլորը խմբերգեր: Դրանցից բացի, լայնորեն հայտնի են՝ «Ծիծեռնակ», «Ձայն տուր, ո՛վ ծովակ», «Հայաստան» մեներգերը, պակաս հայտնի է «Բա՛մ, փորոտան»-ը Կոմիտասի դաշնակամաբ որպես մեներգ:

Թված երգերն, իրենց մեղեդիական ոճով, այս կամ այն չափով են հայ ժողովրդականին հարազատ: Այսպես, օրինակ, «Մեղ նոր արև ծագե»-ն իր մեղեդիով ոչինչ հայկական չունի: Սակայն, նույնիսկ այդպիսի մեղեդիներն էլ, հայկական, այն ժամանակի հասարակության համար հրատապ, հասարակական հուզմունք արթնացնող խոսքերի հետ միաձուլված լինելով, հարադատացել են, մեծ ոգևորությամբ ընկալվել, դեղագիտական, դաղափարական, բարոյական բավարարություն են պատճառել հասարակությանը: Անշուշտ, Կոմիտասն ինքն ստացել է այդ բավարարությունը և այն՝ թե՛ երգերը մշակելու, թե՛ կատարելու ընթացքում:

Հայ քաղաքային ժողովրդական մեղեդիներից շատերը մոնոդիկ չեն, այսինքն՝ դրանց լադախնտոնացիոն կերտվածքը ինչ-որ չափով հիմնված է հարմոնիայի (մասնավորապես՝ տերցիային ակորդների) օրինաչափությունների վրա: Բաղմաձայնելիս դա սահմանափակել է ստեղծագործական պրպտումների հնարավորությունը: Ինչպես Կարա-Մուրզայի և Եկմալյանի, այնպես էլ Կոմիտասի համար բաղմաձայնելու հիմնական միջոցը ռվոպական դասական հարմոնիան է եղել: Սակայն, նախորդների նման, Կոմիտասն ևս ձգտել է հնարավոր ինքնատիպություն տալ դաշնակամանը՝ կվինտային ակորդներով, միահնչյունով և այլն: Միաժամանակ, ռվոպական հարմոնիան նա շատ ավելի հարուստ է կիրառել՝ լիահնչուն ակորդային շարքեր, տոնայնական շեղումներ, տեղին կիրարկված խրոմատիզմ, այս բոլորի դեպքում՝ պոլիֆոնիայի տարրերի առատ դործածություն և այլն: Շատ երգեր հայտնաբերված են դաշնակաման մի քանի տարբերակներով:

Ընդհանուր առմամբ, Կոմիտասի մշակած քաղաքային ժողովրդական երգերը, մասնավորապես՝ խմբերգերը գեղարվեստական զգալի շահեկանություն ունեն: Դրանք հետաքրքրական են ոչ միայն որպես անցյալի հայ հասարակական կյանքը վերարտադրող հուշեր, այլև մեծ մասամբ՝ որպես ներգործությամբ, ուժը պահպանած գեղարվեստական էջեր, իրենց անկեղծ քնարականությամբ,

Հայրենասիրության ջերմ զգացումով, ևրբեմն՝ բուռն ոգևորության արտահայտումով և այլն: Այգպես են՝ «Արաքսի արտասուքը» իր մի քանի տարբերակներով, «Ծրագր»-ը, «Հիմի էլ լոենք»-ը, «Ո՛հ, ինչ անուշ»-ը, ուսանողական «Ո՛հ, ինչ քաղցր բան» կատակերգը, նույն՝ «Մեզ նոր արև ծագե»-ն, որ տճող էրոսությամբ՝ երգչախմբային վարիացիաների ձև ունի¹, «Ո՛վ, մեծասքանչ դու լեզու»-ն և այլն:

«Հայ ապրենք, եղբայրք» ընդարձակ խմբերգում Կոմիտասը միացրել է Նար-Պեյի ոտանավորներով ստեղծված, նույն թեման շոշափող երկու հրգեր՝ դանդաղահոս, տխուր հուզականությամբ օժտված «Հայ մեռնենք»-ը և ուրախ, քայլերդային «Հայ ապրենք»-ը: Զգացվում է արտահայտման պատանեկան պարզություն, հիմնական գաղափարին ջերմ նվիրվածություն: Այս երգի հիմնական թեգը՝ «Ի՞նչ կխաբվեք օտարին...» հետագայում Կոմիտասը պահպանեց և դարձրեց հալ ժողովրդի ազատագրության հարցում իր քաղաքական հալացքների կարևոր կետերից մեկը: Այդ երգի մշակումից մոտ 15 տարի հետո Ա. Զոպանյանին ուղղած նամակում նա վճռականորեն գրում է. «Զպե՛տք է խաբվենք Եվրոպայի զանազան խոստումնալից խաբկանքներին» և նշում է ուսական հեղափոխության դերը հայ ժողովրդի ազատագրության հարցում: Ծեմարանական երգեցիկ խմբին հատկացված մյուս մշակումների նման, այս խմբերգն ևս գրված է զույգ դիսկանտների և նեղ ձայնածավալի տենորների ու բասերի համար: Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի հուզականությամբ և ազդեցության ինչպիսի ուժով պետք է հնչեր այն ժամանակ այդ երգի՝ պատանիների զնգուն ձայնով, մանկական անմիջականությամբ «արտասանվող» հետևյալ հատվածը (տե՛ս էջ 31) և հաջորդ՝ երգն եղրափակող քայլերդային հատվածը՝ «Հայ ապրենք, եղբայրք...», որտեղ դարձյալ պատանիներն են «շարագրում» խոսքերը, իսկ մեծերը (տենոր և բաս) խրոխտ կրկնում, հաստատում են նրանց ամեն մի ֆրազը:

Եթե այս երգը Կոմիտասի ստեղծագործության մեջ հայրենասիրական առաջին լուրջ արտահայտումներից մեկն է, ապա նրա գործունեության վերջին տարիների՝ նույն զգացմունքների մի վառ արտահայտություն է ն. Մեզպուրյանի խոսքերով ժողովրդականացած «Ո՛վ, մեծասքանչ դու լեզու» երգի մշակումը: Կոմիտասն, ինչպես միշտ, լրջորեն է մոտեցել և այս խնդրին: Հրատարակված նոտաների մեջ գրված է. «Թեպետև կան ուրիշ եվանակներ ևս, սակայն երգի իմաստին հարմարագույն այս ձևը դատեցինք. Կ. Վ.»: Ուրեմն, նախ՝ պատշաճ ընտրել է բուն մեղեդին: Հետո՝ չափազանց բնորոշ են երգի մշակման մեջ տարբեր տեղերում նրա առաւ նշանակած կատարողական ցուցմունքները՝ «գովական, մեղմ և խորհրդավոր», «հպարտ», «կաթոգին» և այլն:

Կոմիտասի «Ո՛վ, մեծասքանչ»-ը մշակված է խմբերգային գրության կատարյալ վարպետությամբ: 1913 թվականի հոկտեմբերին արևմտահայության շրջանում այս խմբերգը բաղմիցս հնչեց և դարձավ հայ գրերի գյուտի հորելյանի փառահեղ տոնակատարության կենտրոնական օղակը: «Եվրոպեիզմնե-

¹ Երգչախմբային վարիացիաները երաժշտական ստեղծագործությունների սակավ հանդիպող ձևերից մեկն են: Թե՛ այս, և թե՛ գյուղական «Հովն անուշ» խմբերգում այդ ձևն օգտագործելու մեջ Կոմիտասի ստեղծագործական նախաձեռնությունն, անշուշտ, արժանի է հատուկ նշվելու:

[illegible]

րր», որոնք մեղեդիի ելևէջներում բավական ակնհայտ են, չխանգարեցին, որ հրգը լայն տարածում գտնի, դառնա ժողովրդի նվիրական հույդերի արտահայտիչը: Մինչև այսօր էլ այդ խմբերգը սփյուռքահայության ազգայահայանման գործում մեծ դեր է կատարում:

Գովական. $\text{♩} = 46$.

Սուր. *Խոփախախտախոփա.*
Բաժն.
 Ով հեշտ բար-բառ մայ - րա-կան.

Բարձր. *Բաժն.*
 Ով բար-բառ մայ - րա-կան.

Սուկ. *Մեղմ և խորհրդաւոր.*
 Ով մե-ծա-ւքանջ դու — լե-զու.

Բաժն. *Մեղմ և խորհրդաւոր.*
 Ով մե-ծա-ւքանջ դու լե-զու — բար-բառ.

անուշիկ. *արտազերբուն.*
Բաղ-ցրա-հըն-կեն քա - - առ-բուդ-նը-ման ար-դեօք այլ — տեղ կան:
արտազերբուն.
Նը-ման ար-դեօք այլ — տեղ կան:
շատ նուրբ. վեհաւ.
Ֆայտաւ ար.
 Բաղ-ցրա-հըն-կեն քա - - առ-բուդ-նը-ման ար-դեօք այլ տեղ կան:
Ֆայտաւ ար.
 Նը-ման-ար-դեօք այլ տեղ կան:

Գնահատելով Կոմիտասի մշակած հայ քաղաքային երգերը, մենք հեռու ենք դրանք իրենց արժեքով նրա գեղջուկ երգերին համադրելու մտքից: Դրանք ստեղծագործական վառ անհատականություն չեն դրսևորում և չունեն գեղարվեստական այն անվադամեռությունը, որ բնորոշ է գեղջուկ երգերի մշակումներին: Այլ հարց է՝ այդ երգերը յուրովի լայնացնում էին հայ կոմպոզիտորական երաժշտության ինտոնացիաների և արտահայտչական մյուս միջոցների (մասնավորապես՝ հարմոնիայի և պոլիֆոնիայի) ընդհանուր «պաշարը», բազմադանում այդ միջոցների օգտագործման կոմպոզիտորական հնարները, ուրեմն և օրչեկտիվորեն, հայ երաժշտության զարգացման մեջ ևս ունեցան իրենց պատմական կարևոր նշանակությունը, մեծ դեր խաղացին նաև ժամանակի հայ երաժշտական կենցաղի զաղափարական ու գեղարվեստական մակարդակի

բարձրացման գործում: Անկախ դրանից, նույն այդ երգերը, որոնցում ևս զգացվում է բարձրաշնորհ ստեղծագործողի ձեռքը, իրենց վերը թված առանձնահատկությունների շնորհիվ պահպանում են զեղարկեստական զգալի արժեք և այսօր դեռևս կարող են հնչել ու զեղադիտական բավարարություն պատճառել

Կաթողն. $\text{♩} = 68$.

սերտիւ և աճուռն.

Դուրսնախինձ հընչե-ցիր Եսխ-սի-րոյ, հե- հեղտ-խօս-քեր

հիւս, որ հընչե-ցիր հեղտ խօս-քեր,

սերտիւ և աճուռն. վերտ.

Որ նախինձ հընչե-ցիր Եսխ-սի-րոյ հեղտ-խօս-քեր,

հայարտ. ցոհ.

Եսխ թնձ հընչե-ցիր սի-րոյ խօս-քեր,

սերտիւ և աճուռն.

Այն նախ թէզ թո-թո-վելս Դեռ իմ մտքէն չէ ե-լեր:

հատ-հատ և մտածկոտ

Այն դեռ իմ մտքէն չէ ե-լեր:

սերտիւ և աճուռն. կարտոփ.

Եսխ թէզ թո-թո-վելս իմ մտքէն չէ ե-լեր:

հայարտ. հաստատունով.

Ըզ-թէզ թո-թո-վելս դեռ չէ ե-լեր:

ունկնդիրներին: Դրանք յուրովի լրացնում են Կոմիտասի ստեղծագործական ժառանգությունը:

Կոմիտասի մշակած հայ քաղաքային ժողովրդական երգերը կզետեղվեն նրա երկերի ժողովածուի 4-րդ հատորում: Մինչև այժմ հայտնաբերված, երկու տասնյակից փոքր-ինչ ավելի այդ նմուշները, Կոմիտասի մշակած հայ քաղաքային ժողովրդական բոլոր երգերը չեն: Հայտազրեքում և այլուր հանդիպում են այլ երգերի անուններ, որոնք ևս պետք է վնտրել և գտնել:

Սրտակոչ

սերտիւ, պայծառ և կրակով.

Իմ մայրենի, քաղ-ցըրէ-զու, կեանք ան-սա-սան, կեանք յա-ւէտ -

սերտիւ, պայծառ և կրակով.

Իմ մայրենի, քաղ-ցըրէ-զու, կեանք ան-սա-սան, կեանք յա-ւէտ -

ներքին հրեշտակներով.

Իմ մայրենի, քաղ-ցըրէ-զու, կեանք կեանք յա-ւէտ -

կարօտալիք.

Իմ մայրենի, քաղ-ցըրէ-զու —

վեհ և լեցուն:

Կեանք միշտ լին-զուդ — հայկ-ար-ժան, կեանք ծաղ-կա-լից, ծաղ-կա-ւէտ:

վեհ և լեցուն.

Կեանք միշտ լին-զուդ — հայկ-ար-ժան, կեանք ծաղ-կա-լից, ծաղ-կա-ւէտ:

ներքին հրեշտակներով.

Կեանք միշտ լին-զուդ — հայկ-ար-ժան լին-զուդ կեանք ծաղ-կա-ւէտ:

վեհ և պայծառանքով.

Կեանք ծաղ-կա-լից, կեանք ծաղ-կա-ւէտ:

Ճանաչ. կրկնել վերջին երկու տողն իւր արձագանքով:

» Թեւեւ և կան ուրիշ նշանակներ ևս, սակայն երգի իմաստին յարմարացնելն այս հետ դ. ճշգրտ. Կ.Վ.